# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

այաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնք
.Հ, Կոտայքի մարզ, գ. Գեղաշեն,

## Ո Ր Ո Շ Ու Մ

12 հոկտեմբերի 2012թվականի N 18

## ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԿՈՐՅՈՒՆ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով " Տեղական ինքնակառավարման մասին " Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի հունիսի 9-ի թիվ 947-Ն որոշմամբ հաստատված հավելվածի պահանջներով և հիմք ընդունելով բնակարանային հարցերի հանձնաժողովի 2012թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 1 արձանագրությունը համայնքի ավագանին որոշում է

1. Բավարարել 1998թվականի դեկտեմբերի 3-ին ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված Քերոբ Կորյունի Մուրադյանի հոր՝ Կորյուն Քերոբի Մուրադյանի դիմումը և նրա ընտանիքը ընդգրկել բնակարանային պայմանների բարելավման ցուցակում:
2. Խնդրել համայնքի ղեկավար Արմեն Հովհաննիսյանին Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի հուլիսի 9-ի "Անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին" թիվ 947-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի պահանջներին համաձայն Կորյուն Քերոբի Մուրադյանի անհրաժեշտ փաստաթղթերը ուղարկել Կոտայքի մարզպետարան վերջնական ամփոփման և համապատասխան ընթացք տալու համար:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԼՅՈՎԱ
2. ԲԱԲԱՅԱՆ ԱՐԹՈՒՐ
3. ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐԱ
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՄ
5. ԴԱՎԹՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
6. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ
7. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՅԿ
8. ՍԱՄՍՈՆՅԱՆ ՍՈՒՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ